



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«~~12 հեկտեմբեր~~» 2013 թ.

N 244/Մ

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԼՂՀ կրթության և գիտության նախարարության կառուցվածքային ստորաբաժանումների գործունեությունը կանոնակարգելու և նախարարության համակարգող ոլորտներում պետական քաղաքականության իրականացմանն ուղղված ծրագրերն իրագործելու նպատակով հ Ր Ա Մ Ա Ն ու մ է մ.

1. Հաստատել ԼՂՀ կրթության և գիտության նախարարության 2014 թվականի աշխատանքային պլանը /կցվում է/:

2. ԼՂՀ կրթության և գիտության փոխնախարարներին, աշխատակազմի ղեկավարին, վարչության և տեսչությունների պետերին ու բաժնի վարիչներին՝

ի ղեկավարումն և ի կատարումն ընդունել ԼՂՀ կրթության և գիտության նախարարության 2014 թվականի աշխատանքային պլանը:

3. Ընդհանուր բաժնին՝ ԼՂՀ կրթության և գիտության նախարարության 2014 թվականի աշխատանքային պլանը բազմացնել և տրամադրել նախարարության ստորաբաժանումներին, շրջվարչակազմերի ու Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմերի կրթության բաժիններին և հրատարակել նախարարության տեղեկագրում:



Ս. ԱՍՐՅԱՆ

**ԼՂՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2014 Թ.  
 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ  
 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ**

Հ/Հ	Միջոցառման անվանումը	Ժամկետը	Կատարողը
1	2	3	4
1.	ԼՂՀ նախագահի, ԼՂՀ Ազգային ժողովի, ԼՂՀ կառավարության՝ ԼՂՀ կրթության և գիտության նախարարության ոլորտներին վերաբերող հանձնարարականների, որոշումների, ԼՂՀ օրենքների ուսումնասիրում և կատարում	տարվա ընթացքում	վարչություն, տեսչություններ, բաժիններ
2.	Վարչակազմերի, բաժինների ու ենթակա հիմնարկների, հաստատությունների կողմից նախարարության ընդունած հրամանների, կարգադրությունների, որոշումների ու հրահանգչական փաստաթղթերի գործառնության իրագործման վերահսկում	տարվա ընթացքում	վարչություն, տեսչություններ, բաժիններ
3.	Վերադաս մարմիններից, տարբեր ձեռնարկություններից ստացած գրությունների ընթացավորում, անհատական և կոլեկտիվ դիմում-բողոքների և գրությունների քննարկում, համապատասխան միջոցների ձեռնարկում	տարվա ընթացքում	վարչություն, տեսչություններ, բաժիններ
4.	ԼՂՀ նախագահի աշխատակազմին առընթեր տեղեկատվության գլխավոր վարչությանը համակարգի ոլորտների ամսական հաշվետվությունների և աշխատանքային պլանների ներկայացում	յուրաքանչյուր ամսվա վերջին օրերին	վարչություն, տեսչություններ
5.	Նախարարության վարչությունների և բաժինների մասնագետների աշխատանքային պարտականությունների բաշխում	հունվար	փոխնախարարներ, վարչության և տեսչությունների պետեր
6.	Հաճախորդների ընդունելություն	ըստ սահմանված կարգի	նախարար փոխնախարարներ, վարչ. պետ, բաժնի վարիչներ
7.	ԼՂՀ առողջապահության, ԼՂՀ արտաքին գործերի, ԼՂՀ պաշտպանության, ԼՂՀ աշխատանքի և սոցիալական ապահովության, ԼՂՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարությունների, ԼՂՀ կառավարությանն առընթեր փրկարար ծառայության, ԼՂՀ ոստիկանության ու սպորտի պետական	ըստ համագործակցության պլանների	նախարարություններ, վարչություններ, բաժիններ

	կոմիտեների հետ համատեղ միջոցառումների անցկացում		
8.	Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի, պաշտպանության նախարարությունների հետ համատեղ միջոցառումների անցկացում	ըստ համագործակցության պլանների	նախարարություններ, վարչություններ
9.	Համակարգի մասնագետների վերապատրաստման և որակավորման տարակարգի շնորհման գործընթացի ապահովում	տարվա ընթացքում	համաձայն ԼՂՀ ԿԳ նախարարության, ՀՀ ԿԳ նախարարության ԿԱԻ ԼՂՀ մասնաճյուղի պլանի

## 2. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հ/Հ	Միջոցառման անվանումը	Ժամկետը	Կատարողը
1.	ԼՂՀ օրենքների, ԼՂՀ կառավարության որոշումների, նախագծերի մշակում և քննարկում ըստ համակարգի ոլորտների	տարվա ընթացքում	վարչություն, տեսչություններ, բաժիններ
2.	Կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների լիցենզավորման և հավատարմագրման գործընթացի իրականացում	տարվա ընթացքում	լիցենզավորման և հավատարմագրման հանձնաժողով, վարչություն
3.	ԼՂՀ հանրակրթական դպրոցների տնօրենների հավաստագրումների և ուսուցիչների ատեստավորման նախապատրաստական աշխատանքների իրականացում	տարվա ընթացքում	վարչություն
4.	Մասնագիտական, մեթոդական գրականության և տեղեկատվական ժողովածուների հրատարակում, «Լուսարար» պաշտոնաթերթի ու «Կրթությունը և գիտությունը Արցախում» հանդեսի բաժանորդագրության, հրատարակման և առաքման գործընթացի կազմակերպում	տարվա ընթացքում	վարչություն, խմբագրակազմ, հրատարակչական խորհուրդ
5.	Հանրակրթական ուսումնական հաստատությունների պետական ոչ առևտրային կազմակերպությունների վերակազմավորելու գործընթացի իրականացում	տարվա ընթացքում	վարչություն
6.	Նախարարության աշխատակազմի քաղծառայողների թափուր պաշտոնների մրցույթների կազմակերպում	տարվա ընթացքում	աշխատակազմի ղեկավար
7.	Նախարարության աշխատակազմի քաղծառայողների վերապատրաստում և ատեստավորում	տարվա ընթացքում	աշխատակազմի ղեկավար
8.	ԼՂՀ ուսումնական հաստատությունների նյութատեխնիկական բազայի համալրում	տարվա ընթացքում	աշխատակազմի ղեկավար

**3. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԱՆՑԿԱՑՈՒՄՆ՝  
ԸՍՏ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՈՒՈՐՏՆԵՐԻ**

**3.1 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԻՏՈՒԹՅՈՒՆ**

**ա/ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԻՏՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ**

ՀՀ	Միջոցառման անվանումը	Ժամկետը	Կատարողը
1.	Աշխատանքներ տանել ՀՀ պետական բուհերում ԼՂՀ-ին հատկացված պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ /անվճար/ տեղերում սովորող ուսանողներին դրամական փոխհատուցում տալու համար	ուսումնական տարվա կտրվածքով	առաջատար մասնագետ
2.	ԼՂՀ գիտական կադրերի երիտասարդացման համար Հայաստանի Հանրապետության առաջատար բուհերում և գիտակրթական հաստատություններում 2014/2015 ուսումնական տարվա ասպիրանտուրայի ընդունելության տեղերի հայտի կազմում և ուղարկում ՀՀ կրթության և գիտության նախարարություն	հունվար	բաժնի վարիչ
3.	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և /կամ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տրամադրելու կարգը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 26-ի N28-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին որոշման նախագծի մշակում	հունվար	բաժնի վարիչ գլխավոր մասնագետ
4.	ԼՂՀ պետական և հավատարմագրված ոչ պետական բուհերի, միջին մասնագիտական և նախնական մասնագիտական /արհեստագործական/ ուսումնական հաստատությունների առկա և հեռակա ուսուցման 2014-2015 ուստարվա անվճար և վճարովի ուսուցման տեղերի պլանավորում	փետրվար	վարչություն, բուհեր, ՄՄՈՒՀ-ներ, նախնական մասնագիտական /արհեստագործական ուսումնարաններ/
5.	ՀՀ պետական բուհերում ԼՂՀ-ին հատկացվելիք նպատակային տեղերի պլանավորում	փետրվար	վարչություն, բաժին
6.	Արցախի պետական համալսարանի	փետրվար	վարչություն,

	առկա ուսուցման մագիստրատուրայի և ասպիրանտուրայի, «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի Ստեփանակերտի մասնաճյուղի մագիստրատուրայի 2014-2015 ուստարվա մասնագիտությունների ցանկի և անվճար ու վճարովի ուսուցման տեղերի պլանավորում		Արցախի պետական համալսարան, «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի Ստեփանակերտի մասնաճյուղ
7.	ԼՂՀ պետական և հավատարմագրված ոչ պետական բուհերի, միջին մասնագիտական և նախնական մասնագիտական /արհեստագործական/ ուսումնական հաստատությունների շրջանավարտների ավարտական փաստաթղթերի հայտերի կազմում և ուղարկում ՀՀ ԿԳ նախարարություն	փետրվար	բաժին
8.	Արցախի պետական համալսարանի և ԼՂՀ-ին հատկացված ՀՀ պետական բուհերի նպատակային տեղերի բակալավրի որակավորմամբ շրջանավարտների համար ՀՀ պետական բուհերի 2014-2015 ուստարվա մագիստրատուրայի ընդունելության անվճար ուսուցման տեղերի պլանավորում	ապրիլ-մայիս	բաժին
9.	Մասնակցություն ԼՂՀ և ՀՀ պետական բուհերում ԼՂՀ-ին հատկացված տեղերի 2014 թ. ընդունելության կանոնների մշակման աշխատանքներին	մայիս	վարչություն, բաժին
10.	ԼՂՀ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների 2014 թ. ընդունելության կանոնների մշակում	մայիս	վարչություն, բաժին
11.	ԼՂՀ պետական և հավատարմագրված ոչ պետական բուհերի, ՄՄՈՒՀ-ների և նախնական մասնագիտական /արհեստագործական/ ուսումնական հաստատությունների ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների թեկնածությունների հաստատում	մայիս	նախարար
12.	ԱրՊՀ, ԼՂՀ հավատարմագրված ոչ պետական բուհերի, ՄՄՈՒՀ-ների և նախնական մասնագիտական /արհեստագործական/ ուսումնական հաստատությունների ամփոփիչ ատեստավորման ընթացքի վերահսկում	մայիս-հունիս	բաժին
13.	Օտարերկրյա բարձրագույն ուսումնական կամ գիտակրթական հաստատություններում ԼՂՀ քաղա-	հունիս-օգոստոս	բաժնի վարիչ, գլխավոր մասնագետ

	քացիների կրթության և կեցության վճարների փոխհատուցման աշխատանքների կազմակերպում		
14.	ԱրՊՀ, ԼՂՀ հավատարմագրված ոչ պետական բուհերի շրջանավարտների համար ավարտական փաստաթղթերի ստացման հայտի ուսումնասիրում և ուղարկում ՀՀ ԿԳ նախարարություն	հունիս-հուլիս	բաժնի վարիչ, գլխավոր մասնագետ
15.	Ստեփանակերտի և Մարտունու արհեստագործական ուսումնարանների տնօրենների, տնօրենների տեղակալների և վարպետների վերապատրաստում	հուլիս	բաժին
16.	ԼՂՀ ՄՄՈՒՀ-ների և նախնական մասնագիտական /արհեստագործական/ ուսումնարանների ուսումնական պլանների վերանայում ու հաստատում	սեպտեմբեր	նախարար, վարչություն, բաժին
17.	ԼՂՀ պետական և հավատարմագրված ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների մագիստրատուրա ընդունվածների անձնական գործերի ուսումնասիրում	սեպտեմբեր	բաժին
18.	Շուշիի Ա. Խաչատրյանի անվան հումանիտար քոլեջի կրթական գործունեության՝ ԼՂՀ օրենսդրության համապատասխանության ուսումնասիրում և վերահսկողության իրականացում	սեպտեմբեր	բաժին
19.	«ԼՂՀ կառավարության 2008 թ. փետրվարի 14-ի N66 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ԼՂՀ կառավարության 2009 թվականի նոյեմբերի 13-ի N745-Ն որոշման ընթացքի 2014-2015 ուսումնական տարվա կտրվածքով համապատասխան աշխատանքների ապահովում	հոկտեմբեր	բաժին, առաջատար մասնագետ
20.	Մարտունու արհեստագործական ուսումնարանի կրթական գործունեության՝ ԼՂՀ օրենսդրության համապատասխանության ուսումնասիրում և վերահսկողության իրականացում	հոկտեմբեր	բաժին
21.	Աշխատանքներ տանել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության հետ պայմանավորվածության համաձայն Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունից 2012 և 2013 թվականներին Հայաստանի Հանրապետության պետական բուհեր ընդունված և անվճար ուսուցման համակարգում ընդգրկված	հոկտեմբեր	բաժնի պետ, գլխավոր մասնագետ

	ուսանողների՝ ըստ բուհերի պետական բյուջեով սահմանված մեկ ուսանողի ծախսերի չափով 2014-2015 ուսումնական տարվա ֆինանսական միջոցները փոխհատուցելու ուղղությամբ		
22.	«ԼՂՀ պետական և հավատարմագրված ոչ պետական բուհերի, միջին մասնագիտական և նախնական մասնագիտական /արհեստագործական/ ուսումնական հաստատությունների առկա և հեռակա ուսուցման 2015-2016 ուստարվա մասնագիտությունների և ընդունելության քննությունների ցանկի հաստատման մասին» ԼՂՀ կառավարության որոշման նախագծի մշակում	նույեմբեր	փոխնախարար, վարչություն, բաժին
23.	Մասնակցություն ԼՂՀ պետական և հավատարմագրված ոչ պետական բուհերում, միջին մասնագիտական և նախնական մասնագիտական /արհեստագործական/ ուսումնական հաստատություններում տարեվերջյան հաշվետու ժողովներին	դեկտեմբեր	նախարար, փոխնախարար, վարչության պետ, բաժնի պետ
24.	Արցախի գիտական կենտրոնի 2014 թվականի կատարած թեմաների հաշվետվությունների ուսումնասիրում	դեկտեմբեր	բաժնի վարիչ, գլխավոր մասնագետ
25.	Ամենամյա գիտամեթոդական աշխատանքների ստուգատես-մրցույթի կազմակերպում և անցկացում	դեկտեմբեր	վարչություն, բաժին, ԱրՊՀ

*բ/ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ*

Հ/Հ	Միջոցառման անվանումը	Ժամկետը	Կատարողը
1	Ճշտել ԼՂՀ հանրակրթական դպրոցների շրջանավարտների համար անհրաժեշտ ավարտական փաստաթղթերի պահանջարկը և պատվիրել ըստ անհրաժեշտ քանակի	I եռամսյակ	բաժնի վարիչ
2	Վերահսկել ԼՂՀ դպրոցականների առարկայական օլիմպիադայի շրջանային /քաղաքային/ փուլի առաջադրանքների կազմումը նախարարության մասնագետների կողմից և դրանց առաքումը շրջվարչակազմերի ու Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմի կրթության բաժիններ	հունվար-փետրվար	վարչության պետ, բաժնի վարիչ, նախարարության մասնագետներ
3	Վերահսկել Արցախյան շարժման տարելիցին նվիրված հանրակրթական դպրոցներում իրականացվող տարաբնույթ	I եռամսյակ	վարչություն, բաժին

	միջոցառումների ընթացքը		
4	ԼՂՀ պաշտպանության բանակի հետ համատեղ միջոցառումների շրջանակներում վերահսկել և անցկացնել ԼՂՀ հանրակրթական դպրոցների 9-12-րդ դասարանների սովորողների միջև ստեղծագործական շարադրությունների մրցույթի շրջանային և հանրապետական փուլերը	մարտ-ապրիլ	վարչություն, բաժնի վարիչներ, մասնագետներ
5	Կազմակերպել ստեղծագործական շարադրությունների մրցույթում հաղթող ձևաչված աշակերտների և ժամկետային զինծառայողների հանդիպում և հանդիսավոր կերպով կատարել պարգևատրումները	ապրիլ-մայիսին	նախարար, վարչության պետ, բաժնի վարիչ
6	Համատեղ աշխատանքներ տանել ԼՂՀ վարչակազմների աշխատակազմերին կից անչափահասների հետ տարվող աշխատանքների գծով հանձնաժողովների հետ՝ սովորողների կողմից կարգազանցության դեպքեր չթույլատրելու, հանրակրթական դպրոցներում չընդգրկված երեխաներին արհեստագործական ուսումնարաններում և դպրոցներում ընդգրկելու ուղղությամբ	մշտական	վարչություն, բաժին
7	Կազմակերպել և անցկացնել ԼՂՀ դպրոցականների առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլը	փետրվար-մարտ	վարչություն
8	«Այբ» կրթական հիմնադրամի հետ համաձայնագրի շրջանակներում աջակցել «Կենզուրու» մաթեմատիկական խաղ-մրցույթի անցկացման կազմակերպչական աշխատանքներին	մարտ	վարչություն, բաժին
9	Հանրապետության ուսուցիչների և բարձր դասարանցիների համար կատարել դըպրոցականների առարկայական օլիմպիադաների առաջադրանքների վերլուծություն և հրապարակել «Լուսարար» թերթում	մարտ-ապրիլ	վարչություն, ԱրՊՀ դասախոսներ
10	Ապահովել ԼՂՀ դպրոցականների առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլի հաղթողների մասնակցությունը ՀՀ-ում անցկացվող օլիմպիադայի եզրափակիչ փուլին՝ ըստ ժամանակացույցի	մարտ-ապրիլ	վարչություն, բաժին
11	Ամփոփել ԼՂՀ դպրոցականների առարկայական օլիմպիադայի արդյունքները և արդյունքների մասին հանդես գալ «Լուսարար» թերթում	ապրիլ	փոխնախարար, վարչության պետ
12	Կազմակերպել հանդիպում օլիմպիադայի հանրապետական և եզրափակիչ փուլերում հաղթող ձևաչված աշակերտների եւ նրանց դասավանդող ուսուցիչների հետ՝ կատարելով պարգևատրումներ	ապրիլ	փոխնախարար, վարչություն, բաժին
13	Վերահսկել հանրակրթական դպրոցներում	տարվա	վարչություն, բաժին,



	պետական ավարտական և էքստերն կարգով անցկացվող քննությունների ընթացքը և ԳԹԿ-ի հետ համագործակցության շրջանակներում մասնակցել միասնական քննությունների անցկացման նախապատրաստական և ընթացիկ աշխատանքներին	ընթացքում	ԳԹԿ
14	ԼՂՀ պաշտպանության բանակի հետ համագործակցության շրջանակներում, Մայիսյան եռատոնի հետ կապված, մասնակցել հանրակրթական դպրոցների աշակերտների եւ Մեծ հայրենականի ու Արցախյան պատերազմի վետերանների հետ կազմակերպվող հանդիպումներին	մայիս	վարչություն
15	Աշակերտների մասնագիտական կողմնորոշման նպատակով ԼՂՀ հանրակրթական դպրոցների 9-րդ դասարանների աշակերտների շրջանում բացատրական աշխատանքներ տանել միջին մասնագիտական հաստատությունների, արհեստագործական և ավագ դպրոցի դերի ու նշանակության մասին	տարվա ընթացքում	վարչություն, բաժին, շրջվարչ. /Ստեփ. քաղ./ աշխ. կրթ. բաժիններ
16	Ուսումնասիրել «Տարվա լավագույն դպրոց», «Տարվա լավագույն ուսուցիչ, լավագույն մանկավարժական փորձ», «Տարվա լավագույն աշակերտ» մրցույթների շրջանային փուլում հաղթող ճանաչված եւ հանրապետական փուլին մասնակցելու իրավունք նվաճած դպրոցների, ուսուցիչների և աշակերտների հանրապետական հանձնաժողովին ներկայացրած փաստաթղթերը	II եռամսյակ	վարչության պետ, Հանրապետական հանձնաժողովի անդամներ
17	Ուսումնասիրել «Տարվա լավագույն դպրոց», «Տարվա լավագույն ուսուցիչ, լավագույն մանկավարժական փորձ» մրցույթների շրջանային փուլում հաղթող ճանաչված ու հանրապետական փուլին մասնակցելու իրավունք նվաճած դպրոցների և ուսուցիչների գործունեությունը տեղերում և արդյունքներն ամփոփել	II եռամսյակ	վարչության պետ, Հանրապետական հանձնաժողովի անդամներ
18	ԼՂՀ հանրակրթական դպրոցների և արհեստագործական ուսումնարանների շրջանավարտների համար անհրաժեշտ ավարտական փաստաթղթերի ստացում և բաշխում	II եռամսյակ	բաժնի վարիչներ
19	Ճշտել և ձեռք բերել անհրաժեշտ քանակությամբ մեթոդական գրականություն, դպրոցական նոր դասագրքեր, համապատասխան ծրագրեր, դասամատյաններ, ուսուցիչների ձեռնարկներ և դրանք առաքել շրջվարչակազմերի /Ատեփանակերտ քաղաքի/ աշխատակազմերի կրթության բաժիններ	III եռամսյակ	վարչություն, շրջվարչ. /Ստեփ. քաղ./ աշխ. կրթ. բաժիններ
20	Ուսուցիչների օգոստոսյան խորհրդակ-	օգոստոս	վարչություն, բաժին,

	ցությունները հանրապետության բոլոր շրջաններում կազմակերպված անցկացնելու նպատակով մշակել պլան-գրաֆիկ և առաջնորդվել դրանով		շրջվարչ. /Ստեփ. քաղ./ աշխ. կրթ. բաժիններ
21	ՀՀ ԿԳ նախարարության օժանդակությամբ կազմակերպել և անցկացնել հանրակրթական դպրոցների մանկավարժական աշխատողների հերթական նախաատեստացիոն վերապատրաստման դասընթացներ	մարտ-ապրիլ	վարչություն, բաժին, շրջվարչ. /Ստեփ. քաղ./ աշխ. կրթ. բաժիններ
22	Կազմակերպել և անցկացնել «Տարվա լավագույն աշակերտ» մրցույթի հանրապետական փուլը	ապրիլ	վարչության պետ, բաժնի վարիչ
23	Վերահսկել հանրապետության տարածքում դպրոցահասակ երեխաների հաշվառման և տվյալ օրացուցային տարվա մինչև դեկտեմբերի 31-ը 6 տարեկանը լրացած երեխաներին դպրոց ընդգրկելու աշխատանքները	օգոստոս-սեպտեմբեր	բաժին, շրջվարչ. /Ստեփ. քաղ./ աշխ. կրթ. բաժիններ
24	Ապահովել «Հայ ասպետ» հեռուստախաղի հիմնական և լրացուցիչ փուլի առաջադրանքները ստանալու նպատակով խմբի ղեկավարների մեկնումը Հայաստանի Հանրապետություն	II եռամսյակ	վարչություն
25	Ապահովել ԼՂՀ հանրակրթական դպրոցների թիմերի մասնակցությունը ՀՀ-ում անցկացվող «Հայ ասպետ» հեռուստախաղին և հերթական փուլերին	II եռամսյակ	վարչություն
26	Քննարկել Ստեփանակերտի հ.3 ռուսերենով ուսուցմամբ դպրոցի առաջին դասարան ընդունվելու համար ներկայացված դիմումները և թույլատրել ընդունելությունը կատարել ըստ գործող կարգի	օգոստոս-սեպտեմբեր	վարչության պետ, բաժնի վարիչ
27	Մշակել պլան-գրաֆիկ՝ հանրակրթական դպրոցներում «Գիտելիքի օրը», «Ուսուցչի օրը», «Վերջին զանգի» և մյուս հանդիսավոր կերպով նշվող տարելիցներին մասնակցելու և ընթացքը վերահսկելու նպատակով	ուստարվա ընթացքում	վարչություն, շրջվարչակազմ, /Ստեփ. քաղ./ աշխ. կրթ. բաժիններ
28	Կազմակերպել և բարձր մակարդակով ու հանդիսավոր կերպով անցկացնել հոկտեմբերի 5-ի Ուսուցչի օրվա տոնակատարությունը	հոկտեմբեր	վարչություն, շրջվարչակազմ, /Ստեփ. քաղ./ աշխ. կրթ. բաժիններ
29	Նախարարության համապատասխան մասնագետների կողմից հանրապետության տարբեր շրջանների հանրակրթական դպրոցների ռուսաց լեզվի ուսուցիչների ընդգրկմամբ կազմակերպել և անցկացնել «Ռուսական խոսքի շաբաթ» միջոցառումը	հոկտեմբեր	բաժին, ռուսաց լեզվի մասնագետներ
30	«Այբ» կրթական հիմնադրամի հետ համաձայնագրի շրջանակներում աջակցել «Ռուսական արջուկ» լեզվագիտական	նոյեմբեր	վարչություն, բաժին

	խաղ-մրցույթի անցկացման կազմակերպչական աշխատանքներին		
31	Նպատակաւազ գործունեություն ծավալել հանրակրթական դպրոցներում ուսումնադաստիարակչական աշխատանքների բարելավման և անհրաժեշտ մեթոդական ու մասնագիտական օգնություն ցույց տալու ուղղությամբ: Օժանդակել և մասնակցել հանրակրթական դպրոցներում կազմակերպվող տարաբնույթ միջոցառումներին	ուստարվա ընթացքում	վարչություն, բաժին
32	Աջակցել և մասնակցել Մարտակերտի, Հադրութի, Շահումյանի շրջվարչակազմերի աշխատակազմերի կողմից հենակետային դպրոցներում կազմակերպվող փնջային ու առարկայական մեթոդխորհուրդների նիստերին և ցուցաբերել անհրաժեշտ մասնագիտական և մեթոդական օգնություն	II եռամսյակ	վարչություն, բաժին
33	Մշտապես կապ պահպանել հանրապետության ավագ և հոսքային դպրոցներում գործող առարկայական մեթոդխորհուրդների հետ, ամեն կերպ աջակցել նրանց աշխատանքներին և մասնակցել նրանց կողմից կազմակերպվող դասմիջոցառումներին, ընդօրինակման դասերին և մեթոդխորհուրդների նիստերին	տարվա ընթացքում	վարչություն, բաժին
34	Շրջվարչակազմերի /Ստեփանակերտի քաղաքապետարանի/ աշխատակազմերի կրթության բաժինների, արհեստագործական ուսումնարանների ներկայացրած հաշվետվությունների հիման վրա կազմել և ՀՀ ԿԳ նախարարություն ներկայացնել շրջանավարտների համար անհրաժեշտ քանակի ավարտական փաստաթղթերի ստացման և բաշխման մասին հաշվետվություն	IV եռամսյակ	բաժնի վարիչ
35	Ելնելով 2009թ. հունիսի 30-ի ԼՂՀ կառավարության «Մանկավարժին այլ վայր ուղեգրելու մասին» N 466 որոշումից և որոշման մեջ կատարված համապատասխան փոփոխությունից հանրակրթական դպրոցներն ապահովել համապատասխան մասնագետներով	տարվա ընթացքում	վարչություն
36	Վերահսկել շրջվարչակազմերի և Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմերի կրթության բաժինների կողմից նախարարության ընդունած որոշումների, հրամանների, կարգադրությունների եւ հրահանգչական փաստաթղթերի իրականացման ընթացքը	տարվա ընթացքում	վարչություն

զ/ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԵՎ ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԲԱԺԻՆ

Հ/Հ	Միջոցառման անվանումը	Ժամկետը	Կատարողը
1	Թարմացնել ԼՂՀ նախադպրոցական հաստատությունների տեղեկատվական բազան	հունվար	բաժնի վարիչ
2	Մասնակցել Ստեփանակերտի նախադպրոցական հաստատությունների և հանրակրթական դպրոցների ամանորյա միջոցառումներին	հունվար	բաժնի վարիչ, մասնագետներ
3	Այցելել Ստեփանակերտի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն՝ երկրորդ կիսամյակում ընթացող ուսումնադաստիարակչական աշխատանքներին ծանոթանալու և մեթոդական օգնություն ցուցաբերելու նպատակով	հունվար	բաժնի վարիչ, մասնագետներ
4	Այցելել Ստեփանակերտի հ. 4 և 5 հիմնական դպրոցներ՝ նախադպրոցական խմբերի ուսումնադաստիարակչական աշխատանքներին ծանոթանալու և մեթոդական օգնություն ցուցաբերելու նպատակով	հունվար	բաժնի վարիչ, գլխավոր մասնագետ
5	Արցախի հոգևոր թեմի հետ կազմել միասնական աշխատանքային պլան՝ ԼՂՀ դպրոցներում աղանդավորության դեմ պայքար տանելու նպատակով	փետրվար	բաժին, Արցախի թեմ
6	Կազմակերպել օրինակելի պարապմունք Ստեփանակերտի հ. 1 հիմնական դպրոցի նախադպրոցական խմբում	փետրվար	բաժնի վարիչ, գլխավոր մասնագետ
7	Վերահսկել Ստեփանակերտի հիմնական դպրոցներին կից գործող նորաբաց նախադպրոցական խմբերի ուսումնադաստիարակչական աշխատանքները	փետրվար	բաժին
8	ԼՂՀ շրջանային բաժիններ առաքել «Գիտունիկ» ինտելեկտուալ մրցույթի անցկացման ժամկետը և թեման հավաստող նամակներ	փետրվար	վարչություն, բաժին
9	Մասնակցել Ստեփանակերտի հանրակրթական դպրոցներում և մանկապարտեզներում անցկացվող մարտի 8-յան միջոցառումներին	մարտ	բաժնի վարիչ, մասնագետներ
10	Նախապատրաստվել ՀՀ և ԼՂՀ Ազգային ժողովների հետ համատեղ ԼՂՀ հանրակրթական դպրոցներում	մարտ	վարչություն, բաժին

	կազմակերպվող ասնունքի մրցույթին		
11	Մասնակցել ԼՂՀ հանրակրթական դպրոցներում կազմակերպվող «եղիթ պրինտ» հրատարակչության ընթերցանության հանրապետական երրորդ մրցույթին	մարտ	բաժնի վարիչ, մասնագետներ
12	Այցելել Ասկերանի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն՝ կատարվող աշխատանքներին ծանոթանալու և մեթոդական օգնություն ցուցաբերելու նպատակով:	մարտ	բաժնի վարիչ, մասնագետներ
13	Կազմակերպել և անցկացնել ԼՂՀ հանրակրթական դպրոցների միջև «Գիտունիկ» ինտելեկտուալ մրցույթի հանրապետական փուլը	ապրիլ	վարչություն, բաժին
14	Այցելել Հադրութի շրջանի Դրախտիկ և Մարտունու շրջանի Կարմիր Շուկա գյուղերի մանկապարտեզներ՝ համալիր ստուգման և մեթոդական օգնություն ցուցաբերելու նպատակով	ապրիլ	բաժնի վարիչ, գլխավոր մասնագետ
15	Աջակցել Ստեփանակերտի հ. 1 մանկապարտեզում օրինակելի պարամունքի անցկացմանը	ապրիլ	բաժին
16	Ուսումնադաստիարակչական աշխատանքների դրվածքին ծանոթանալու նպատակով այցելել Ստեփանակերտի հ. 2 հիմնական դպրոցի նախադպրոցական խմբերը	ապրիլ	բաժնի վարիչ, մասնագետներ
17	Կազմել և ԼՂՀ մանկապարտեզներ առաքել մեթոդական և աշխատանքային ուղեցույցներ՝ կապված 2013 թ. հաստատված սանիտարական և սննդի նորմերի հետ	մայիս	բաժին
18	ՀՀ և ԼՂՀ Ազգային ժողովների հետ համատեղ կազմակերպված ասնունքի մրցույթի անցկացում՝ ԼՂՀ հանրակրթական դպրոցների սովորողների միջև՝ 2 տարիքային խմբերով	մայիս	վարչություն, բաժին
19	Մասնակցել ԼՂՀ հանրակրթական դպրոցներում և նախադպրոցական հաստատություններում Մայիսյան եռատոնին նվիրված միջոցառումներին	մայիս	բաժնի վարիչ, մասնագետներ
20	Ստեփանակերտի նախադպրոցական հաստատությունների տնօրինությունների	հունիս	վարչություն, բաժին

	հետ համատեղ կազմակերպել տոնական համերգ՝ նվիրված երեխաների պաշտպանության միջազգային օրվան		
21	Կազմակերպել նախադպրոցական հաստատությունների դաստիարակների ձեռքի աշխատանքների ցուցահանդես	հունիս	բաժնի վարիչ, մասնագետներ
22	Այցելել «Լավագույն դաստիարակ» մրցույթին հայտ ներկայացրած մանկապարտեզները՝ մրցույթի շրջանային փուլում հաղթող ճանաչված դաստիարակների աշխատանքներին ծանոթանալու նպատակով	հունիս	վարչություն, բաժին
23	Համակողմանի ստուգման և մեթոդական օգնություն ցուցաբերելու նպատակով այցելել Մարտունու հ. 1 և հ. 2, Սոսի, Հադրութի շրջանի Տողի, Մեծ Թաղերի, Ասկերանի շրջանի Խնձրիստանի և Խաչենի մանկապարտեզները	հուլիս	ԿՊՏ, բաժին
24	ԿՊՏ-ի հետ համատեղ ստուգել Ստեփանակերտի հ. 2 մանկապարտեզում ընթացող աշխատանքները	հուլիս	ԿՊՏ, բաժին
25	Կազմակերպել աշակերտական ամառային ճամբարներ՝ Կարկառում և Շուշիում	հուլիս, օգոստոս	բաժնի վարիչ, մասնագետներ
26	Նախապատրաստել Հունաստանի հանգստյան ճամբար մեկնող երեխաների փաստաթղթերը	օգոստոս	բաժնի վարիչ, մասնագետներ
27	Այցելել Մարտակերտի շրջանի Մեծ Շենի նորաբաց մանկապարտեզ՝ ուսումնադաստիարակչական աշխատանքներին ծանոթանալու և մեթոդական օգնություն ցուցաբերելու նպատակով	սեպտեմբեր	բաժնի վարիչ, մասնագետներ
28	ԼՂՀ նախադպրոցական հաստատությունների միջին խմբի դաստիարակների 5-օրյա վերապատրաստման դասընթացների կազմակերպում	սեպտեմբեր	բաժին
29	ԼՂՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենների մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալների 5-օրյա վերապատրաստման դասընթացների կազմակերպում	սեպտեմբեր	բաժին
30	Ամփոփել «Տարվա լավագույն դաստիարակ» մրցույթի արդյունքները և	սեպտեմբեր	վարչություն, բաժին

	ներկայացնել տեղեկանք մրցույթի հանրապետական հանձնաժողովին		
31	Համակողմանի ստուգման նպատակով այցելել Մարտունու շրջանի Ղուզե Ճարտար և Գյունե Ճարտար գյուղերի մանկապարտեզները	հոկտեմբեր	բաժնի վարիչ, մասնագետներ
32	Մասնակցել «Ուսուցչի օրվան» նվիրված հանդիսավոր միջոցառմանը:	հոկտեմբեր	բաժնի վարիչ, մասնագետներ
33	Կազմակերպել օրինակելի պարապմունք Ստեփանակերտի հ. 1 հիմնական դպրոցի 6-ժամյա նախադպրոցական խմբում	նոյեմբեր	բաժնի վարիչ, մասնագետներ
34	Այցելել Ասկերանի ՀԱԸ և Խնապատի մանկապարտեզները՝ համակողմանի ստուգման և մեթոդական օգնություն ցուցաբերելու նպատակով	նոյեմբեր	բաժնի վարիչ, մասնագետներ
35	Արցախի հոգևոր թեմի հետ համատեղ կազմած պլանի համաձայն՝ անցկացնել հանդիպումներ՝ Ստեփանակերտի հ. 4, հ. 5, հ. 6, հ. 9 հիմնական դպրոցներում՝ ուսուցչական և աշակերտական կոլեկտիվների հետ	տարվա ընթացքում	բաժնի վարիչ, մասնագետներ
36	Աջակցել ԼՂՀ մանկապարտեզներում և հանրակրթական դպրոցներում ազգային, հոգևոր և պետական տոների անցկացմանը	տարվա ընթացքում	բաժնի վարիչ, մասնագետներ

**ՈՂՁՄԱԿԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ**

Հ/Հ	Միջոցառման անվանումը	Ժամկետը	Կատարողը
1.	ԼՂՀ հանրակրթական ուսումնական հաստատություններում կազմակերպել արիության դասեր և ցերեկույթներ՝ նվիրված միջազգային, ՀՀ և ԼՂՀ տոն և հիշատակի օրերին՝ -Արցախի վերածննդի օր -Հայրենյաց պաշտպանի օր -Գերիների միջազգային օր -Ցեղասպանության զոհերի հիշատակի օր -Հաղթանակի, ԼՂՀ պաշտպանության բանակի և Շուշիի ազատագրման օր -Երեխաների պաշտպանության միջազգային օր	Փետրվարի 20 Փետրվարի 23 Ապրիլի 14 Ապրիլի 24  Մայիսի 9  Հունիսի 1	ԼՂՀ ԿԳ և ՊՆ ՈՀԴ և ՀԿՀԿ բաժիններ

	-Հայրենիքի համար նահատակվածների և անհայտ կորածների հիշատակի օր -Գրի և դպրության օր - ԼՂՀ անկախության օր - ԼՂՀ պետական անկախության մասին հանրաքվեի և սահմանադրության օր	Հունիսի 29  Սեպտեմբերի 1 Սեպտեմբերի 2 Դեկտեմբերի 10	
2.	Այցելել և վերահսկել ԼՂՀ հանրակրթական ուսումնական հաստատություններում կազմակերպվող Արցախի հերոսների ծննդյան օրերին նվիրված հուշ ցերեկույթներ՝ -Պետրոս Դևոնյան՝ Արցախի հերոս -Յուրի Պողոսյան՝ ՀՀ ազգային հերոս և Արցախի հերոս -Աշոտ Ղուլյան՝ Արցախի հերոս -Վահագն Վարդևանյան՝ Արցախի հերոս -Մոնթե Մելքոնյան՝ ՀՀ ազգային հերոս և Արցախի հերոս -Քրիստաֆոր Իվանյան՝ Արցախի հերոս -Վազգեն Սարգսյան ՀՀ ազգային հերոս և Արցախի հերոս	հունվարի 30 ապրիլի 8  հոկտեմբերի 6 հոկտեմբերի 11 նոյեմբերի 25  դեկտեմբերի 20 մարտի 5	ԼՂՀ ԿԳ և ՊՆ ՌՀԴ և ՀԿՀԿ բաժիններ, դպրոց. տնօրեններ
3.	Մասնակցություն ԼՂՀ հանրակրթական դպրոցների 9-11-րդ դասարանների աշակերտների ընդգրկմամբ Մայիսյան եռատոնին նվիրված շարադրությունների մրցույթի շրջանային և հանրապետական փուլերի անցկացմանը	I – II եռամսյակ	վարչություն, բաժինների վարիչներ և մասնագետներ
4.	ԼՂՀ հանրակրթական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների զինղեկների վերապատրաստման և ատեստավորման նպատակով եռօրյա ուսումնամեթոդական հավաքների կազմակերպում	Մարտի 20-22	ԼՂՀ ԿԳ և ՊՆ ՌՀԴ և ՀԿՀԿ բաժիններ
5.	ԼՂՀ հանրակրթական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների 11-րդ դասարանցիների հետ մեկօրյա ռազմադաշտային պարապմունքների կազմակերպում	ապրիլի 25	ԼՂՀ ԿԳ և ՊՆ ՌՀԴ և ՀԿՀԿ բաժիններ
6.	ԼՂՀ ԿԳՆ կրթության պետական տեսչության հանձնախմբի կազմում հանրակրթական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում մասնակցել համակողմանի ստուգումներին, կատարել դասալսումներ և ցուցաբերել մեթոդական օգնություն ՆԶՊ և ՖԴ առարկաների ուսուցիչներին	համաձայն ԿՊՏ ժամանակացույցի	ԼՂՀ ԿԳ և ՊՆ ՌՀԴ և ՀԿՀԿ բաժիններ
7.	Մասնակցություն ԼՂՀ հանրակրթական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում ՆԶՊ և ՖԴ դասընթացի տարբեր բաժիններից	համաձայն ժամանակացույցի	ԼՂՀ ԿԳ և ՊՆ ՌՀԴ և ՀԿՀԿ բաժինների մասնագետներ



	կազմակերպված բաց դասերին և մեթոդական օգնության ցուցաբերում		
8.	ԼՂՀ հանրակրթական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում բաց տիպի պարզագույն մարզական համալիրների վերանորոգման և նորերի կառուցման աշխատանքներում մեթոդական օգնության և աջակցության ցուցաբերում	պարբերաբար	վարչություն բաժիններ
9.	Նախապարապմունքային մարմնամարզության և արտադասարանական մարզական աշխատանքների կազմակերպման և անցկացման ընթացքը ստուգելու նպատակով շրջայցերի կատարում Ստեփանակերտ քաղաքի հանրակրթական դպրոցներ	պարբերաբար	վարչություն բաժիններ
10.	Ուսումնասիրել ՆԶՊ և ՖԴ ծրագրերը, չափորոշիչները, մեթոդական ուղեցույցները և պարզաբանումներ ներկայացնել ուսուցիչների օգոստոսյան խորհրդակցությունների մասնախմբային նիստերում	հունիս-հուլիս	բաժնի վարիչ մասնագետներ
11.	ԼՂՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների շախմատ առարկայի ուսուցիչների հետ եռօրյա վերապատրաստման դասընթացների կազմակերպում:	հուլիս 14-16	բաժնի գլխավոր մասնագետ
13.	Ուսումնասիրել «Տարվա լավագույն գինղեկ» մրցույթի շրջանային /քաղաքային/ փուլում հաղթող ճանաչված և հանրապետական փուլին մասնակցելու իրավունք նվաճած գինղեկների փաստաթղթերը	ապրիլ-մայիս	հանրապետական հանձնաժողով
14.	Մասնակցել ԼՂՀ ԿԳՆ հետ համագործակցող հասարակական կազմակերպությունների հետ համատեղ կազմակերպվող և անցկացվող ռազմահայրենասիրական դաստիարակության թեմաներով միջոցառումներին	պարբերաբար	բաժնի վարիչ, մասնագետներ
15	Ռազմամարզական ճամբարի կազմակերպման և անցկացման համար անհրաժեշտ փաստաթղթերի մշակում	մայիս-հունիս	բաժնի վարիչ
16	ԼՂՀ հանրակրթական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների 10-րդ դասարանցիների ընդգրկմամբ «Ասպետ» ռազմամարզական ճամբարի կազմակերպում	հուլիս-օգոստոս	վարչություն, բաժինների վարիչներ
17	Մասնակցություն Երևան քաղաքում անցկացվող բանակ-դպրոց գիտագործնական համաժողովին	դեկտեմբեր	բաժնի վարիչ

ՌԱԶՄԱՄԱՐԶԱԿԱՆ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

1.	ԼՂՀ դպրոցականների ռազմամարզական միջոցառումների կանոնադրությունների վերամշակում և կից փաստաթղթերով առաքում շրջվարչակազմերի ԿԱ բաժիններ	հունվար-փետրվար	վարչություն, բաժին
2.	9-11-րդ դասարանցիների միջև ռազմականացված հնգամարտի մրցումների հանրապետական փուլի կազմակերպում և անցկացում	մարտի 5-7	բաժնի վարիչ, մասնագետներ
3.	«Արծվիկ» ռազմամարզական խաղերի հանրապետական մրցումների անցկացում	ապրիլի 15-18	բաժին
4.	ԼՂՀ Ազգային ժողովի գավաթի խաղարկության հանրապետական առաջնության կազմակերպում և անցկացում 3-6-րդ դասարանցիների միջև	մարտ-ապրիլ	վարչություն, բաժնի վարիչ
5.	ՀՀ դպրոցականների ապարտակիադայի միջմարզային փուլին ԼՂՀ թիմերի մասնակցություն	ապրիլ	բաժնի վարիչ, մասնագետներ
6.	ՀՀ դպրոցականների շախմատի օլիմպիադայի եզրափակիչ փուլին ԼՂՀ թիմի մասնակցություն	մայիս	բաժնի վարիչ, մասնագետներ
7.	Մայիսյան եռատոնին նվիրված «Ռազմականացված կրոսավազքի» հանրապետական մրցումների անցկացում 9-11-րդ դասարանցիների ընդգրկմամբ	մայիսի 7-8	բաժնի վարիչ, մասնագետներ
8.	ՀՀ դպրոցականների ապարտակիադային եզրափակիչ փուլին ԼՂՀ թիմերի մասնակցություն	հունիս	բաժնի վարիչ, մասնագետներ
9.	Կալաշնիկովի ինքնաձիգից 11-րդ դասարանների տղաների միջև հրաձգության հանրապետական առաջնության անցկացում	հոկտեմբերի 16-17	բաժնի վարիչ, մասնագետներ
10.	ԼՂՀ ԿԱ «Փրկարար ծառայության» հետ համատեղ «Պատանի փրկարարների» հավաք- մրցույթի անցկացում	նոյեմբեր	ԼՂՀ ԿԱ փրկարար ծառայություն, բաժնի վարիչ, մասնագետներ
11.	Մասնակցություն ՀՀ Ազգային ժողովի գավաթի խաղարկության եզրափակիչ մրցումներին	մայիս-հունիս	բաժնի վարիչ, մասնագետներ
12.	ԼՂՀ հանրակրթական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների 9-11-րդ դասարանցիների ընդգրկմամբ «Ուժային եռամարտի»	դեկտեմբերի 24-26	բաժնի վարիչ, մասնագետներ

	հանրապետական մրցումների անցկացում		
13.	<p>ԼՂՀ հանրակրթական դպրոցների 5-9-րդ դասարանների դպրոցականների միջև հանրապետական մրցումների կազմակերպում և անցկացում</p> <ul style="list-style-type: none"> <li>- վոլեյբոլ/տղաներ և աղջիկներ/</li> <li>- բասկետբոլ/տղաներ և աղջիկներ /</li> <li>- հանդբոլ/տղաներ և աղջիկներ/</li> <li>- մինի ֆուտբոլ</li> <li>- թեթևաթիտիկական մրցումներ</li> </ul>	<p>փետրվարի 10-21</p> <p>մարտի 10-21</p> <p>մարտի 31-ապրիլի 11 սեպտեմբերի 22-26</p> <p>հոկտեմբերի 8-10</p>	բաժնի վարիչ, մասնագետներ

**Ե/ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ**

Հ/Հ	Միջոցառման անվանումը	Ժամկետը	Կատարողը
1.	Ասկերանի շրջանի Աստղաշենի և Իվանյանի միջնակարգ դպրոցների համակողմանի ստուգում և մեթոդական օգնության կազմակերպում	հունվար	ԿՊՏ պետական տեսուչներ
2.	Ասկերանի շրջանի Հովսեփավանի հիմնական դպրոցի համակողմանի ստուգում և մեթոդական օգնության կազմակերպում	հունվար	ԿՊՏ պետական տեսուչներ
3.	ԼՂՀ դպրոցականների առարկայական օլիմպիադայի 2014 թ. շրջանային /քաղաքային/ փուլի առաջադրանքների կազմում:	հունվար փետրվար	ԿՊՏ, ԿԳ վարչություն
4.	Ստեփանակերտի Խ. Աբովյանի անվան հ. 1 հիմնական դպրոցի համակողմանի ստուգում և մեթոդական օգնության կազմակերպում	փետրվար	ԿՊՏ պետական տեսուչներ
5.	Մարտունու Ն. Ստեփանյանի անվան հ. 1 հոսքային դպրոցի համակողմանի ստուգում և մեթոդական օգնության կազմակերպում	փետրվար	ԿՊՏ պետական տեսուչներ
6.	Քաշաթաղի շրջանի Կովսականի Թ. Կրպեյանի և Ալաշկերտի միջնակարգ դպրոցների համակողմանի ստուգում և մեթոդական օգնության կազմակերպում	փետրվար	ԿՊՏ պետական տեսուչներ
7.	Մարտունու շրջանի Սոսի Հ. Հակոբյանի անվան միջնակարգ դպրոցի և մանկապարտեզի համակողմանի ստուգում և մեթոդական օգնության կազմակերպում	մարտ	ԿՊՏ պետական տեսուչներ
8.	Մարտունու շրջանի Քերթի Կ. Հակոբյանի անվան և Քարահունջի միջնակարգ դպրոցների համակողմանի ստուգում և	մարտ	ԿՊՏ պետական տեսուչներ

	մեթոդական օգնության կազմակերպում		
9.	Հաղորդի շրջանի Մեծ Թաղերի միջնակարգ դպրոցի համակողմանի ստուգում և մեթոդական օգնության կազմակերպում	մարտ	ԿՊՏ պետական տեսուչներ
10.	Մասնակցություն ԼՂՀ դպրոցականների առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլի անցկացման աշխատանքներին	մարտ	ԿՊ տեսչության պետական տեսուչներ
11.	Ասկերանի շրջանի Քռասնու և Մարտունու շրջանի Ննգու միջնակարգ դպրոցների համակողմանի ստուգում և մեթոդական օգնության կազմակերպում	ապրիլ	ԿՊ տեսչության պետական տեսուչներ
12.	Հաղորդի շրջանի Մարիամաձորի և Ջրակուսի միջնակարգ դպրոցների համակողմանի ստուգում և մեթոդական օգնության կազմակերպում	ապրիլ	ԿՊՏ պետական տեսուչներ
13.	Քաշաթաղի շրջանի Բերձորի Վ. Թեքեյանի անվան հ. 1 միջնակարգ դպրոցի համակողմանի ստուգում և մեթոդական օգնության կազմակերպում	ապրիլ	ԿՊՏ պետական տեսուչներ
14.	Շուշիի շրջանի Լիսագորի միջնակարգ դպրոցի համակողմանի ստուգում և մեթոդական օգնության կազմակերպում	մայիս	ԿՊՏ պետական տեսուչներ
15.	Մարտակերտի շրջանի Վաղուհասի միջնակարգ դպրոցի և նրա Խնկավանի մասնաձյուղի համակողմանի ստուգում և մեթոդական օգնության կազմակերպում	մայիս	ԿՊՏ պետական տեսուչներ
16.	Մասնակցություն Մայիսյան եռատոնին նվիրված տոնակատարություններին Ստեփանակերտի հանրակրթական դպրոցներում	մայիս	ԿՊՏ պետական տեսուչներ
17.	Ստեփանակերտի հանրակրթական դպրոցների ղեկավարների կողմից կատարված դասալսումների ստուգում	մայիս	ԿՊՏ պետ, բաժնի վարիչներ
18.	Ասկերանի շրջանի դպրոցների ղեկավարների կողմից կատարված դասալսումների ստուգում	մայիս	ԿՊՏ պետ, բաժնի վարիչներ
19.	Ստեփանակերտի հ. 1 պետական մանկապարտեզի համակողմանի ստուգում և մեթոդական օգնության կազմակերպում	հունիս	ԿՊՏ, նախադպր. և արտադպր. բաժին
20.	Մարտունու հ. 1 և հ. 2 պետական մանկապարտեզների համակողմանի ստուգում և մեթոդական օգնության կազմակերպում, Մարտունու շրջանի դպրոցների ղեկավարների կողմից կատարված դասալսումների ստուգում	հունիս	ԿՊՏ, նախադպր. և արտադպր. բաժին

21.	Հաղորթի շրջանի ղեկավարների կողմից դասալսումների ստուգում	դպրոցների կատարված	հունիս	ԿՊՏ պետ, բաժնի վարիչներ
22.	Քաշաթաղի շրջանի ղեկավարների կողմից դասալսումների ստուգում	դպրոցների կատարված	հունիս	ԿՊՏ պետ, բաժնի վարիչներ
23.	Շահումյանի շրջանի ղեկավարների կողմից դասալսումների ստուգում	դպրոցների կատարված	հունիս	ԿՊՏ պետ, բաժնի վարիչներ
24.	2014 թ. հունվար-հունիս ամիսների ընթացքում կատարած աշխատանքների մասին հաշվետվությունների կազմում		հունիս	ԿՊՏ պետական տեսուչներ
25.	«Տարվա լավագույն դպրոց», «Տարվա լավագույն ուսուցիչ, լավագույն մանկավարժական փորձ» մրցույթների հանրապետական փուլին մասնակցելու իրավունք նվաճած դպրոցների և ներկայացված փորձերի ուսումնասիրում տեղերում		II եռամսյակ	վարչություն, ԿՊՏ
26.	Հաղորթի շրջանի Տողի և Մեծ Թաղերի «Սոսե» մանկապարտեզների համակողմանի ստուգում և մեթոդական օգնության կազմակերպում		հուլիս	ԿՊՏ, նախադպր. և արտադպր. բաժին
27.	Ասկերանի շրջանի Խաչենի պետական և Խնձրիստանի «Սոսե» մանկապարտեզների համակողմանի ստուգում և մեթոդական օգնության կազմակերպում		հուլիս	ԿՊՏ, նախադպր. և արտադպր. բաժին
28.	Մարտակերտի շրջանի դպրոցների ղեկավարների կողմից կատարված դասալսումների ստուգում		հուլիս	ԿՊՏ պետ, բաժնի վարիչներ
29.	Շուշիի շրջանի դպրոցների ղեկավարների կողմից կատարված դասալսումների ստուգում		հուլիս	ԿՊՏ պետ, բաժնի վարիչներ
30.	«Լուսարար» պաշտոնաթերթում կրթության պետական տեսչության 2013-2014 ուստարում կատարած աշխատանքների լուսաբանում և վերլուծություն		հուլիս	ԿՊՏ պետ
31.	2013-2014 ուստարում իրականացված ստուգումների հիման վրա մասնագիտական վերլուծություններ		հուլիս	ԿՊՏ պետական տեսուչներ
32.	Թեմատիկ ստուգումներ Ստեփանակերտի բոլոր դպրոցներում և Արիեստագործական ուսումնարանում		սեպտեմբեր	ԿՊՏ պետական տեսուչներ
33.	Մարտունու շրջանի Խերխանի և Ծովատեղի հիմնական դպրոցների համակողմանի ստուգում և մեթոդական օգնության կազմակերպում		սեպտեմբեր	ԿՊՏ պետական տեսուչներ
34.	2014-2015 ուստարվա հանրակրթական դպրոցների և արիեստագործական ուսումնարանների տարիֆավորման		սեպտեմբեր	ԿՊՏ պետական տեսչություն

	ցուցակների ստուգում		
35.	Շահունյանի շրջանի Քնարավանի և Խարխափուտի միջնակարգ դպրոցների համակողմանի ստուգում և մեթոդական օգնության կազմակերպում	հոկտեմբեր	ԿՊՏ պետական տեսուչներ
36.	Քաշաթաղի շրջանի Բերձորի Վ. Ջատիկյանի անվան հ. 2 միջնակարգ դպրոցի համակողմանի ստուգում և մեթոդական օգնության կազմակերպում	հոկտեմբեր	ԿՊՏ
37.	Մարտակերտի շրջանի Մոխրաթաղի Գ. Պողոսյանի անվան և Մաղավուզի Մ. Դանիելյանի անվան միջնակարգ դպրոցների համակողմանի ստուգում և մեթոդական օգնության կազմակերպում	նոյեմբեր	ԿՊՏ պետական տեսուչներ
38.	Ասկերանի շրջանի Ավետարանոցի և Սղնախի միջնակարգ դպրոցների համակողմանի ստուգում և մեթոդական օգնության կազմակերպում	նոյեմբեր	ԿՊՏ պետական տեսուչներ
39.	Ստեփանակերտի Ա. Սախարովի անվան հ. 8 ավագ դպրոցի համակողմանի ստուգում և մեթոդական օգնության կազմակերպում	նոյեմբեր	ԿՊՏ պետական տեսուչներ
40.	Մարտակերտի շրջանի Քուլատակի միջնակարգ և Թբիլուի տարրական դպրոցների համակողմանի ստուգում և մեթոդական օգնության կազմակերպում	նոյեմբեր	ԿՊՏ պետական տեսուչներ
41.	Շուշիի Մուրացանի անվան ավագ դպրոցի և ՄՊԱԿ-ի համակողմանի ստուգում և մեթոդական օգնության կազմակերպում	դեկտեմբեր	ԿՊՏ պետական տեսուչներ
42.	Մարտակերտի շրջանի Վարդաձորի հիմնական և Ծաղկաբերդի Ա. Սարգսյանի անվան տարրական դպրոցների համակողմանի ստուգում և մեթոդական օգնության կազմակերպում	դեկտեմբեր	ԿՊՏ պետական տեսուչներ
43.	2014 թ. հուլիս-դեկտեմբեր ամիսների ընթացքում կատարած աշխատանքների մասին հաշվետվությունների կազմում	դեկտեմբեր	ԿՊՏ պետական տեսուչներ

**զ/ ԼԵԶՎԻ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ**

Հ/Հ	Ենթոցառման անվանումը	Ժամկետը	Կատարողը
1.	Վերահսկողական գործառույթներ և պատասխանատու միջոցառումներ իրականացնել լեզվական քաղաքականության բնագավառում	տարվա ընթացքում	տեսչության պետ

2.	Կազմակերպել շրջայցեր Ստեփանակերտում և շրջաններում՝ գովազդները, վահանակները և ցուցանակները հայերենով ձևավորելու գործընթացի վերահսկման նպատակով	տարվա ընթացքում	տեսչության պետ, առաջատար մասնագետներ
3.	Վերահսկել մամուլը, հեռուստատեսության և ռադիոընկերությունների հաղորդումները՝ չեզվական քաղաքականության պետական ծրագրի պահանջների կատարման առումով	տարվա ընթացքում	մասնագետներ
4.	Ապահովել գրական հայերենի կանոնաբեկումը և հասարակական կյանքի բոլոր ոլորտներում նրա գործածությունը	տարվա ընթացքում	մասնագետներ
5.	Մայրենի միջազգային օրվան նվիրված՝ հանրակրթական դպրոցներում հայտարարել լավագույն միջոցառումների միամսյակ	հունվար-փետրվար	տեսչության պետ, առաջատար մասնագետներ
6.	<p>ԼՂՀ սեփական մարմիններում ու կազմակերպություններում գործավարությունը հայերենով վարելու պահանջի իրականացման վարահսկման նպատակով կազմակերպել ստուգայցեր.</p> <p>ա/ «Արմինկո» ՆԿ բ/ «Արեգակ» ՈւԱԿ ՀՌՀ մասնաճյուղ գ/ Հաղբուրի շրջվարչակազմ դ/ «Արցախի մաս» ՓԲԸ ե/ «Արցախի խոստ» ՓԲԸ զ/ «Կենտրոնական ավտոկայան» ՓԲԸ է/ «Ավտոբուս» ՓԲԸ ը/ Մարտունու շրջվարչակազմ թ/ Շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչություն ժ/ Ջրային տնտեսության վարչություն</p>	<p>հունվար փետրվար մարտ ապրիլ մայիս հունիս հուլիս սեպտեմբեր հոկտեմբեր նոյեմբեր</p>	տեսչության պետ, առաջատար մասնագետներ

7.	<p>Կրթական համակարգում դասավանդման և դաստիարակության լեզվի՝ գրական հայերենի գործածության պահանջի կատարման վերահսկման նպատակով կազմակերպել ստուգայցեր հանրապետության շրջանների և մայրաքաղաքի դպրոցներ.</p> <p>ա/Ստեփանակերտի N2 հիմնական դպրոց</p> <p>բ/Հաղբուրի միջնակարգ դպրոց</p> <p>գ/ Ստեփանակերտի N9 հիմնական դպրոց</p> <p>դ/ Ստեփանակերտի N10 հիմնական դպրոց</p> <p>ե/ Մարտունու N 2 հիմնական դպրոց</p> <p>զ/ Ստեփանակերտի N11 ավագ դպրոց</p>	<p>փետրվար</p> <p>մարտ</p> <p>ապրիլ</p> <p>մայիս</p> <p>սեպտեմբեր</p> <p>հոկտեմբեր</p>	<p>տեսչության աշխատողներ</p>
8.	<p>Հայերենին բնորոշ պատող անձանց համար երգակերպել և անցկացնել «Հայերենը ոչ հայախոսների համար» եռամսյա ռադիոթացներ</p>	<p>ապրիլ-հունիս</p>	<p>տեսչության աշխատողներ</p>
9.	<p>Իրականացնել «Լեզվի բնագավառում պետական ռադաքականությունն ու կառավարումը» գրքույկի վերահրատարակում</p>	<p>տարվա ընթացքում</p>	<p>տեսչության աշխատողներ</p>
10.	<p>Ձեռք բերել մասնագիտական բառարաններ</p>	<p>III եռամսյակ</p>	<p>տեսչության աշխատողներ</p>
11.	<p>Շարունակել համագործակցությունը ՀՀ լեզվի պետական տեսչության հետ</p>	<p>տարվա ընթացքում</p>	<p>տեսչության աշխատողներ</p>